

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻ ԵՒ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԼԵՁՈՒՆ ԵՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

† ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ 1)

Դիմենք ալժամ բացասական ապառնու կազմութեան մէջ մասնակցող էական չ՛ բալին. եթէ չը բացասականը, ինչպէս վերև տեսանք, չառաջաթեք բառ է (proclitica) զորա հակառակ չ՛ էական բալը (և իւր խոնարհման բոլոր ձևերը, ներկայ, անց. անկատ.) չետաթեք բառ է (enclitica) ասել է թէ թեքվում է դէպի աջն բառը որից չետոյ նա դըրված է և արտասանվում է իրանից առաջ կանգնած բառի հետ իբրև մի բառ, բալց մի՝ արտասանութեամբ և ոչ գրութեամբ: Արտասանվելով իր նախադաս բառի հետ իբրև մի բառ էնկլիտիկան կորցնում է իւր սեպհական շեշտը (որովհետև մի բառը երկու շեշտ չ'է կարող ունենալ), բալց կորցնում է ոչ առանց հետևանքի նախադաս բառի շեշտի համար. ալդ բառի շեշտը աւելի ուժ է ստանում. ահա թէ ինչպէս և ինչո՞ւ. ինչպէս չալտնի է, մեր գրականական 2) լեզվի մէջ բառերը, շատ քիչ բացառութեամբ, ստանում են շեշտը իրանց վերջին վանկի վերալ (ofitono). ու՛ ռազդրութիւն է դարձրել, նա նկատել է նոյնպէս, որ մի շարք վերջին վանկերը շեշտովդ բառերից բաղկացած նախադասութեան մէջ, կարդալիս կամ խօսելիս, մենք բոլոր բառերն էլ հաւասարապէս չենք շեշտում. առ-

1) Տես «Մուրճ» 1894 թ. № 2:

2) Ես գիտութեամբ եմ ասում «գրականական լեզվի», որովհետև մեր բարբառները ունին ալ օրէնք շեշտադրութեան. զորա մասին կը խօսենք չետոյ՝ հերթը բարբառներին հասած ժամանակը. առ ալժամ տես իմ «Ագուլ լեցող բարբ.» 38:

նենք, օրինակ, ալօպլսի մի նախադասութիւն՝ «հարցը մնաց առանց պատասխանի» (Սամ. Բաֆֆի եր. 409)։ Եթէ լաւ դիտելու լինենք կը տեսնենք որ ալս նախադասութեան մէջ վերջին բառը աւելի ուժով է չեշտութեամբ թէ առաջին երեք բառերը, որոնց չեշտերը համեմատաբար աւելի թուլ են, և ալ կերպ չէ էլ կարող լինիլ. որովհետեւ եթէ ալ բառերից ամեն մէկը նոյնապիսի ուժով չեշտենք ինչպէս վերջինը՝ դուրս կը գալ որ մենք նախադասութիւնը չենք արտասանում ալ՝ երգում ենք։ Եթէ նշանակելու լինինք չեշտերը լուծարէնում ընդունված ձևով՝ զօրեղ չեշտը՝ (accentus acutus) թուլը՝ (accentus gravis), մեր նախադասութիւնը կը ստանալ հետեւեալ չեշտադրութիւնը՝ «հարցը մնաց առանց պատասխանի» իսկ փորձեցէք կարդալ նոյն նախադասութիւնը արտասանելով ամեն մի բառը չեշտի նոյն ուժով, որ ունի վերջին բառը, դուք կը ստանաք հետեւեալ ծաւր արտասանվող (համարեաւ երգվող) նախադասութիւնը՝ «հարցը մնաց առանց պատասխանի»։ Ուրեմն մի որ և է նախադասութիւն ժլոր արտասանելու համար նորա oxytonները (վերջաչեշտ բառերը) թուլացնում են իրանց չեշտերը բացի նախադասութեան վերջին բառից. բայց կան դէպքեր երբ նախադասութիւն կազմող բառերը չեն թուլացնում և չեն կարող թուլացնել իրանց չեշտերը։ Այդ լինում է 1) երբ նախադասութեան մէջ մի որ և է բառ՝ ըստ պահանջման մտքով՝ առանձին զօրութիւն ու նշանակութիւն է ստանում. ալ՝ տեսակ բառը նախադասութեան մէջ մենք առանձնապէս և աւելի ուժով ենք չեշտում և մի քանի դէպքերում նշանակում էլ ենք. 2) երբ նախադասութիւն կազմող բառերի շարքը ընդհատվում է կամ բնականապէս կամ մի որ և է նշանակետով. ալ՝ երկու դէպքումն էլ կանգ առնող բառերը վերադարձնում են իրանց չեշտի ուժը. օր. «Այդ միջոցին ներս վազեց մի ուրախ, վառվառն օրիորդ, որը անդադար ի՛նչ վրա՛ն նաչելով, մօտեցնա՛ւ, կանգնեց՝ տիկնոջ առջև՝ և՛ ի՛նչ լի՛ բերկրութեամբ աչքե՛րը դարձնելով դէպի՛ նա՛, հարցրեց...»¹⁾։

3) Շեշտը չէ²⁾ թուլանում երբ նա բառի վերջին վանկի վերան չէ. որովհետեւ մեր (զրականական) լեզվում ալ տեսակ բառեր չ'ունինք կամ

¹⁾ Բաֆֆի Սամուէլ. եր. 409. ալս կտորի մէջ «և իւր լի բերկրութեամբ աչքերը» եթէ տեղաւորէինք ալօպլս՝ «և (առանց ստորակէտի որ աւելի բնական է թվում. արտասանողը ալ ստորակէտի առջև չէ կանգնում) իւր՝ բերկրութեամբ լի աչքերը», աչն ժամանակ կը չեշտէինք ալօպլս — և ի՛նչ բերկրութեամբ լի՛ և ալին։

²⁾ Հարկ ենք համարում ասել որ հանգ. Սարգսեանը իւր չօղաճում ամեն տեղ գրում է չէ (և ոչ չէ)։ Բացի ալ՝ անխնամ կէտադրութեան պատճառով շատ տեղ ստիպւած եղանք բնագրի կէտադրութիւնը փոխել։

համարեա չ'ունինք: Բացատրենք ալդ դէպքը ռուսերէն օրինակներով. մինչդեռ ալսպիսի մի նախադասութիւն (վերջաշեշտ բառերից բաղկացած) **когда отецъ вчера пришелъ домой** արտասանվում է թուլացնելով չեշտը բոլոր բառերի վերալ բացի վերջինից ալսինքն ոչ **когда отецъ вчера пришелъ домой** ալ՝ **когда отецъ вчера пришелъ домой**, հետեւեալ նախադասութեան մէջ չեշտերը ալդ վիճակին չեն ենթարկվում՝ **если хотите одѣлать удовольствіе вашему брату**, ալս նախադասութեան մէջ, ինչպէս կը նկատէ ընթերցողը, բոլոր բառերը հաւասար ուժով են չեշտվում և ալդ անշուշտ ալն պատճառով որ նոցա չեշտերը վերջին վանկերի վերալ չ'են: Ահա ալդպէս և հայերէնում չէ թուլացնում իւր չեշտը ալն բառը որը դրված է լինում էնկլիտիկան է՝ բալ է (նորա խոնարհման բոլոր ձևերի) առաջն անմիջապէս. ապացոյց որ էնկլիտիկան բառը միանում է իւր նախադաս բառի հետ իւր արտասանութեամբ և ալդպիսով մինք ստանում ենք իբր մի նոր բառ, որի չեշտը ոչ վերջին վանկի վերալ լինելով չ'է թուլանում, ինչպէս որ կը թուլանար եթէ վերջաշեշտ բառերում լինէր նախադասութեան անընդհատ շարժվածքում, օր. աղվէ՛սը տեսնում է ագռաւին. ալս օրինակի մէջ «տեսնում» բառի չեշտը նոյն ուժը ունի ինչ որ «ագռաւին». ալս վերջինը չէ թուլացնում չեշտը վերջին բառը լինելով նախադասութեան մէջ. իսկ «տեսնում» չէ թուլացնում, որովհետև միանալով հետեւեալ և լետաթեքի հետ՝ կազմում է մի նոր բառ, որի չեշտը, չլինելով վերջին վանկի վերալ՝ չէ թուլանում: Փորձենք ալդ և դեռ «աղվէսը» բառից լետոյ և դուք կը տեսնէք որ ալդ բառը, որը իւր ներկալ դրութեամբ թուլացնում է իւր չեշտը, ալն ժամանակ չի թուլացնիլ և իւր վերալ առնելով և ալդ իսկ պատճառով նախավերջաշեշտ դառնալով. իսկ «տեսնում» մնալով առանց և կը թուլացնէ իւր չեշտը. օրինակ. աղվէսն է տեսնո՞ւմ ագռաւին. էական է՝ բալի ալդ չատկութիւնը ցոյց տալու համար տեղափոխենք նորան մի քանի կերպ՝ նոյն նախադասութեան մէջ.

աղվէ՛սը տեսնում է ագռաւին

աղվէ՛սն է տեսնո՞ւմ ագռաւին

ագռաւին է տեսնո՞ւմ աղվէսը

տեսնում է աղվէ՛սը ագռաւին

բայց է տեսնում աղվէսը ագռաւին

կամ է ագռաւին տեսնում աղվէսը, ալսինքն նախադասութիւնը էական է՝ բալով չէ կարող սկսվել և ալդ ուշժամ հասկանալի է թէ ինչո՞ւ. էական եմ բալը պահանջ է զգում թեքվելու նախադաս բառին, բայց չը գտնելով ալդպիսին իւր առջևից, ինքն էլ հեռանում է նախադասութեան սկզբից: Բաւական է եթէ նախադասութեան սկսբին լինի գոնեա մի թէկուզ փոքրիկ բառ, օրին. **և**, **և** մենք, որ չ'էինք կարողանում ասել՝

է տեսնում աղվէսը ագռաւին,

կարողանում ենք ասել

չ'է տեսնում աղվեսը ագռաւին,

չ'է ագռաւին տեսնում աղվեսը և ալլն.

ապացոյց, ի միջի ալլոց, որ չէ առանձին խօսք է և ապա առանձին գրելու է:

Էական է՞ բալի չետաթեքութեան, այսինքն արտասանութեամբ իր նախադաս բառին հետ միանալու՝ ուրիշ ապացոյցներ էլ կան.

1) Կենդանի խօսակցական լեզվում մենք շատ ժամանակ է, էի, էր և ալլն ձևերից առաջ կանգնած = (և ոչ =) վերջացած բառերը աջնպէս ենք արտասանում որ ալդ =-ի և է էական բալի չիշեալ ձևերի մէջ մտնում է յ բերանի լարման առաջն առնելու համար. ճիշդ աջնպէս ինչպէս որ ալդ լինում է մի բառի մէջ ձաջնաւորների իրար հանդիպած ժամանակը. օրինակ Եւրոպա, բալց Եւրոպա-լ-ի, բոպէ՛ լոպէ-ի իբր՝ լոպէ-յ-ի և ալլն-ալդպէս է և նա է իբր՝ նա-լ-է, դա է իբր՝ դա-լ-է և ալլն ¹⁾:

2) Եթէ մի որ և է բառ արտասանութեան չարմարութիւնների պայմանով կորցնում է իւր վերջին բաղաձայնը, էնկլիտիկական բառի հանդիպելով կրկին վերականգնում է իւր կորցրած բաղաձայնը նոյն բառի միջին նշույնի կամ ածանցական ժամանակ ձայնաւորի հանդիպելով. օրինակ, օր, սեռ. օրվա(ն), բալց՝ օրվա՛ից. կաթ(ն) բալց՝ կաթ՛ականեր. մաս(ն) մաս՛աւոր. Գեղեցիկ օրինակ է ներկայացնում ալդ դէպքի համար և մեր ցուցական կամ որոշիչ խօրը ը՛ (==ալն). բաղաձայնով վերջացած բառերի վրայ դնվելով՝ ալդ ը՛ խօրի մէջ ը աւելի լսելի է լինում քան նորա ն, որը առանց ալն էլ հակումն ունի ընկնելու բառի վերջից, օրինակ առաջի(ն), վերջի(ն), երա(ն), օրվա(ն), ամառվա(ն) և ալլն և ալդ համարեա իբրև հաստատ օրէնք, երբ որ նորա առաջից կալ մի ուրիշ բաղաձայն, ինչպէս՝ մուկ(ն), ամառ(ն), ձմեռ(ն), հակ(ն), կաթ(ն) և ալլն. նոյն

¹⁾ Այս երևոյթը նկատում է Աղայեանը ասելով՝ «...կիսաբաղաձայն չին բառերի վերջիցն անգամ փախչում կպչում է չաջորդ բառի ձայնաւորին, ինչպէս—հալ է==հա լէ: Այսպէս ենք անում նաև չեղած չին, ինչպէս՝ սա է==սա լէ»։ Բալց ոչ փախչում կպչում է նա չաջորդ բառի ձայնաւորին ալլ չաջորդ բառի ձայնաւորը գալիս կպչում է նախադաս բառին և ալլ՝ ոչ միայն չաջորդ բառի ձայնաւորը միայն, ալլ ամբողջ չաջորդ բառը գալիս կպչում է նախադաս բառին, խառնվելով նորա հետ և արտասանվելով նորա հետ իբրև մի բառ, և ալլն էլ ոչ ամեն մի բառ, ալլ միայն էնկլիտիկական բառերը. ինչպէս որ «չեղած չին» երևան է գալիս ոչ ամեն մի ձայնաւորով սկսվող բառի առջև ալլ միմիայն էնկլիտիկական բառերի (ի հարկէ ձայնաւորով սկսվող) առջև. և ալլ աւելի նկատելի և լսելի կերպով էնկլիտիկական եմ բալի առջև. օր. սա է==սա-լ-է, բալց՝ սա իմանում է և ոչ սա-լ-իմանում է. դա էր իբր՝ դա-լ-էր, բալց դա ասաց ոչ իբր՝ դա-լ-ասաց և ալլն:

ալդ պատճառով և (շն) ցուցական կամ որոշիչ լօղը, դնվելով բաղաձայնով վերջացած բառի վերաջ կորչում է, թողնելով միայն իւր ընկեր կիսաձայն շ-ը որը միայն ալդ ժամանակն է գրվում, օր- մարդն, գործն, գիրքն, աշակերտն և այլն. ալս դէպքում և նոյն հնչառութեամբ ընկնում է ինչպէս և վերև բերած օրինակներում՝ կաթ(ն), մաս(ն) և այլն. բայց որովհետև ալս անգամ և ընկ նեւով բառի միտքը փոխվում է կամ աւելի ճիշտն ասած՝ նա է՛ն ստա- նում ալն նշանակութիւնը որը պիտի տար որոշիչ և լօղը, ալդ պատճառով և ընկնելով երևան է գալիս նորա մասնակից և առաջընթաց շ, որը մինչև ալդ ժամանակ միայն լսելի էր և զօրութեամբ էր զգացվում, իսկ ալժմ և կորչելով նշանագրվում է. եթէ ոչ՝ ցուցական կամ որոշիչ լօղի հետքն անգամ է՛ր մնալ. և դէպ՝ ալդ շ ոչ միայն զգալի և պարզ լսելի լինելու պատճառով պիտի գրված լինի, այլ էտիմոլոգիական հիմք ունի նշանա- գրված լինելու. դա ներկայացնում է 3) վանկի ողումը. ցուցական կամ որոշիչ լօղ է ոչ միայն և տառը ալլ և՛ որը սղումն է 3) դերանվան. (ալս, ալդ, ալն=ըս- ըդ, ըն). և եթէ և-ի հետ միասին է՛նք դնում բաղաձայ- նով վերջացած բառերի վերաջ, դա մենք անում ենք աւանդաբար և ալն հիման վերաջ, որ հալերէն մի բառի մէջ բաղաձայնների կուտակված ժա- մանակը ինքն ըստ ինքեան ենթադրվում է և կիսաձայնի դուռթիւնը 1)։ ինչ և իցէ և լօղը ընկած ժամանակը երևան է գալիս նորա ուղեկից շ (ս՛ն) նոյն ալնպէս ինչպէս սառն, դառն, և ալն=սառը, դառը և ալն, և

1) Կան մի քանի դէպքեր, որ ալդ շ բաւական է՛ որ լսվի և են թաղրվի, այլ հարկաւոր է որ և գրվի. օրինակի համար ստացական աս- ված լոգնակիւմ շ կիսաձայնը բալի, որ շատ լսելի է, նշանագրելը ունի ալն մեծ լարմարութիւնը որ քերականական տարակուսութիւնների և խառնակութիւնների տեղիք է՛ր մնալ. ինչպէս չալտնի է, միավանկ բա- ուերը կազմում են իրանց լոգնակին առնելով էր և ոչ ևէր, օրին. միտք— մտքեր, ձեռ—ձեռեր, (?) գործ—գործեր և այլն. բայց մի և նոյն բառերի համար—մենք կարող ենք պատահել և մտք-ն-եր, ձեռ-ն-եր, գործ-ն-եր և այլն 1)։ եթէ ալդպէս էլ հէնց գրելու լինենք, դուրս կը գալ հակասու- թիւն լիշած քերականական կանոնին, և, բացի դորանից, եթէ մենք առա- ջուց էլիմանալինք թէ ալս տեսակ լոգնակիները արտասանվում են մտք- ըներ, գործ-ըներ, ձեռ-ըներ, մենք կարող ենք արտասանել առանց շ՝ գործներ, ձեռներ և ալս վերջին բառի մինչև անգամ նշանակութիւնը կը փոխէինք. ալլ է ձեռներ (рука), ալլ է ձեռ-ըներ (г, ըն=ВАША (ВА- ША, ВАС) рука։ Այս ստացական անվանված լոգնակու մասին մանրամասն օրէն կը խօսենք քերականութեան մէջ։

1) Ալդ տեսակ լոգնակիները ունին իրանց վերջից դիմորոշական լօ- դեր՝ ս, դ, ն։

ինչպէս որ բառի վերջից կորածն է վերադառնում է եթէ նոյն բառի հոլովման կամ բարդութեան ժամանակ ձայնաւորի է հանդիպում՝ օրին. դառնութիւն, դռներ, միներ և այլն, ալիպէս և ընկած ցուցական լոգըն վերականգնում է, երբ պատահում է անմիջապէս էնկլիտիկական բառի, որը խառնվելով նախադաս բառի հետ և կազմելով իբր մի բառ՝ առաջ է բերում նոյն ալս րոպէիս չիշած երևութիւն. օրին. մարդը էգուց գալու է, բայց մարդն է էգուց գալու. նոյն է հնչիւնը առաջ մենք տեսնում ենք առաջինը դէպքում լ, երկրորդում է և ալի ալս պատճառով որ առաջին օրինակում մարդը և էգուց առանձին թէև խօսքեր են, բայց արտասանվում են ոչ առանձին ալ անընդհատ իբրև մի բառ և ալի պատճառով կորածն է վերադառնում է ինչպէս որ վերադառնում է կաթ(ն)—կաթակեր, սառ(ն)—սառնամանիք, դառ(ն)—դառնութիւն, ալիպէս և մարդը(ն) է—մարդն է, գործը(ն) է—գործն է և չէ կարող լինել մարդ է, գործն է, ինչպէս որ չէ կարող լինել սառն է, դառն է և ալն, Ուրեմն ոչ թէ հետեւեալ բառը սկսող ձայնաւորի չատկութիւնն է որ վերականգնում է ն լոգը, ալ էնկլիտիկական բառի թեքվելը դէպի նախադաս բառը և միանալը նորա հետ իբրև մի բառ. ալիպէս որ գուր է պ. Աղալեանցը կապում է և ն լոգերի գործածութիւնը համեմատ բառեր սկսող ձայնաւորների չատկութեան հետ. «հատ բառերում, ասում է նա, որոնց վրայ ժողովուրդը կանգ առնել ունի, արտասանելիս դնում է լ և ոչ ն, թէկուզ չաջորդ բառը ձայնաւորով լինի սկսած... Այս ինքս գրելիս ոչ մի կանոն չեմ ունենում ի նկատի, ալ միայն իմ բնազդումս և ականջս, որոնց անպաւան հաւատում եմ: Թրինալ՝ նուրբ ձայնաւորների առաջ, ինչպիսիք են և (և), եա, եու և եօ, չեմ դնում ն, ալ լ, գրում եմ Աքպարն ու Քեարամը և՛ Քեարամը և Աքպարը, Է-ից առաջ ն, Է-ից առաջ՝ լ: Ա՛ բառը եթէ էական բալ է, եչը հաստ է հնչում, ինչպէս է, իսկ եթէ էական զերանուն է՝ բարակ: Այս պատճառով էլ ես գրում եմ՝ ալս լօղածն ես եմ գրել և՛ դու ալս լօղածն ես գրել: Ուրեմն՝ եմ, ես, ենք, են՝ թէև առանձին առած՝ եչը հնչում ենք բարակ ձայնով, բայց նախադասութեան մէջ ալիպէս՝ ինչպէս բառերի մէջ ենք հնչում, որ էից չի դաճադանում»¹): Այս կտորը, իրաւ որ, գեղեցիկ կերպով ցոյց է տալիս Աղալեանցի առողջ և խելօք բնազդ ու մը. նա բնազդամբ կարծես զգում է չետաթեք բառերի գոյութիւնը և չատկութիւնը²), բայց ծուռ մեկնութիւն է տալիս ալի երևու-

¹) «Աղբւր». 1888 № 12, էր. 99:

²) Ասեւով՝ «եմ, ես, ենք, են՝ թէև առանձին առած՝ եչը հնչում ենք բարակ ձայնով բայց նախադասութեան մէջ ալիպէս՝ ինչպէս բառերի մէջ ենք հնչում. որ է-ից չի դաճադանում». վիշեալ բառերի է «ինչպէս բառերի մէջ հնչելը (ալիքն է—է) ինքն ըստ ինքեան

թիւն, անպայման հաւատարմով իւր ա կ ա ն ջ ի ն. ձաջնաւորների նուրբ կամ հաստ արտասանութիւնը աչս դէպքում ոչինչ նշանակութիւն չ'ունի, ապացոյց մեր վերև բերած օրինակը՝ մարդը եգուց գալու է և՛ մարդ է եգուց գալու. և միշտ է-ին, բայց աչնու ա՛մենայնիւ մի տեղ մենք տեսնում ենք է-ից առաջ ը, միւս տեղում է-ից առաջ և, Բերենք ուրիշ օրինակ. հալը՝ ա՛ մալը ա՛րախացան. մի ա՛ ից առաջ և, միւս ա՛ ից առաջ ը, բայց խօ ուսու. աչ, հնչում են միատեսակ, բայց աչն զանազանութիւնը ունին, որ առաջին ա՛ (չաղկապ) չետաթեք բառ լինելով արտասանվում է իւր նախադաս բառի հետ իբրև մի բառ. նոյնպէս և բարբառներում. հալը ասում աչ որդուն, բայց՝ հալը աչ ասում որդուն ²⁾։ Ուրեմն մեր դիտողութիւններից չառաջ է գալիս հետևեալ մի օրէնք՝ ցուցական կամ որոշիչ ընդհանրացում է թէ և գրելը ոչ բնազդումից, ոչ կամաւոր ընտրութիւնից և ոչ չափով բառը սկսող ձաջնաւորի չատկութիւնից է կախված, ալ ուղղակի՝ չետաթեք բառերի առաջ լսվում է և գրվում է և, իսկ բոլոր մնացեալ դէպքերում ը։ Աչս վերջինի գործածութեան մէջ ցուցում է-ի բացառութիւններ լինում են չափաբերական գրվածների մէջ. ոտանաւորի մէջ, ինչպէս ամեն մէկը մեզանից զգում է, և աւելի երկար ձաջն ունի քան թէ արձակում. չափաբերականում նա համարեա մի աւելորդ վանկ կազմելու ընդունակութիւն է ստանում և ալդ պատճառով եթէ տողի մէջ հարկէ լինում վանկ պակասացնել՝ աչն ժամանակ ը-ի տեղ դնում են և։

Դիմենք ալժմ է նախդիրն, որը մտնում է բացասական ապառնու կազմութեան մէջ. ալդ նոյն է նախդիրն է որը մասնակցում է սահմանական եղ. ներկա կազմելուն մէջ. միայն աչն տարբերութեամբ որ սահ. եղ. ներկայում մասնակցող է ցոյց է տալիս առարկայի գործողութեան մէջ լինելը, իսկ ապառնում նա ցոյց է տալիս առարկայի գործողութեան նպատակը ²⁾։

հետևանք է ալդ բառերի չետաթեքութեան, աչն է նախադաս բառերին միանալուն իբրև մի բառ իրանց արտասանութեամբ։

²⁾ Տես իմ Ագուլ. բար. գլ II § I ծանօթ. I.

²⁾ Զօղածի շարունակութիւնը չի գտնւած։